NMC
National Mortgage Company

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1 | Armenia 0010, Yerevan, Hanrapetutyan St., 22-7/1 | +37410 560974 | info@nmc.am | www.nmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎՎԿ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1

Հեռ.՝ (+374 10) 56 09 74 , ֆաքս (+374 10) 56 07 41

էլ.փոստ՝ info@nmc.am,

ինտերնետային կայք՝ www.nmc.am

Հաշվետվություն թիվ 05, 08.04.2024

«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի՝ 2024թ. ապրիլի 4-ի կայացրած որոշման համաձայն՝ 2024թ. ապրիլի 9-ից «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի քսանվեցերորդ թողարկման պարտատոմսերը կցուցակվեն և կթույլատրվեն առևտրի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի հիմնական Abond շուկայում: Պարտատոմսերը բորսայում կշրջանառվեն NMCCBQ բորսայական հապավմամբ:

Կից՝ ցուցակման վերաբերյալ որոշումը՝ N ՑՊ-015-04/24:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

04 ապրիլի 2024 թվականի N ՑՊ-015-04/24

ք. Երևան

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության միջնորդությամբ ներկայացված «Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Թողարկող) 2024 թվականի մարտի 29-ի հայտը 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 10% արժեկտրոնային տոկոսադրույքով, 500,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 01-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 11-րդ գլխով սահմանված պահանջներին, և ղեկավարվելով Օպերատորի Կանոնների 15-րդ գլխի 70 կետի 1-ին ենթակետով, և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.57 կետի 9.57.5 ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 10% արժեկտրոնային տոկոսադրույքով, 500,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMNMCCB2QER3 ծածկագիրը, իսկ Օպերատորի կողմից՝ NMCCBQ հապավումը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 09-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**